լով՝ թափում Զայենդերուդը։ Այս չայն իր կանաչ, ծառազարդ ափերով, իր մէջ թափող սառնորակ աղբիւրներով և իր գեղեցիկ տեսարանով կազմում է մի հրաշալի պատկեր, որ և աւելի փայլ է տալիս գիւղին։ Սակայն Նամակերտը հմայիչ է իր բանաստեղծական տեսարաններով և աշխարհագրական դիրքով. նրա արևելեան և հիւսիսային ուղղութեամբ փռուած են գիղեցիկ լեռնաշղթաներ և պճնազարդ բլուրներ, իսկ ծովանման արտերը տարածւում են գիւղի արևելեան, արևմտեան և հիւսիսային կողքերին։

Շահ-Աբբասի ժամանակից սկսուած այդ գիւղն ամբողջ ջապէս հայոց սեփականութիւնն է եղել. բաղկացած է երկու թաղից.—առաջին թաղը բուն գիւղն է, որն ընկած է Փոքրիկ չայի հիւսիս-արևելեան ափին, ընդարձակ մի հովտում, այդտեղ տներն անկանոն են և միմեանց կպած, իսկ երկրորդ թաղն ընկած է գետի հարաւային կողմն և բաղկացած է 14—15 տներից։ Այժմ գիւղն ունի 250 տուն՝ 1965 բնակչով, որից 1048-ը արական է և 917-ը իգական։ Նրանք մնացորդներ են այն մեծ գաղթականութեան, որ կատարուեց ԺԷ-րդ դարում Շահ-Աբբաս մեծի ձեռքով։ Նրանք տոկուն են, քաջ և աշխատասէր. պարապում են գլխաւորապէս երկրագործութեամբ, անասնապահութեամբ և մասամբ էլ այգեմշակութեամբ։

Հողատիրութեան տեսակը «խալիսաթիուլ» է, այսինքն հողը սեփական է և բաժանուած է 72 հաբբայի կամ 6 գօնգի, որից օգտւում է իւրաքանչիւր մարդ հաբբայով՝ իր կարողութեան համաձայն*։ Սակայն գիւղի հողը չի բաւականանում գիւղացիութեան, դրա համար էլ նրանք գիւղի սահմաններում գտնուած հողերը վերցնում են կապալով, բայց ոչ թէ փող են տալիս, այլ ստացուած բերքի $^1/_3$ մասը։ Նրանք հողը վերցնում են մի կամ տասը տարուայ պայմանագրով, որը ստորագրում են գիւղի քէդխուդաները, քա-

* Նոր—Զուղայի Ս. Պատարինեան կուսանաց Վանքն և Ս. Ներսէս եկեղեցին ևս ունեն այս գիւղում կալուածներ։